

ԳԵՎՈՐԳ ԱՐԳԱՐՅԱՆ
(Ծննդյան 85-ամյակի առթիվ)

Հայագիտության անվանի նվիրյալ Գևորգ Արգարյանը ծնվել է 1920 թ. սեպտեմբերի 14-ին Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: 1946 թ. ավարտելով Երևանի համալսարանի պատմության ֆակուլտետը՝ ընդունվել Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան: Նրա ղեկավարն էր նշանավոր գիտնական Կարապետ Մելիք-Օհանյանը:



Վերջապես Գևորգը կարող էր հանգիստ շունչ քաշել ահավոր փորձություններից հետո: Համալսարանի 4-րդ կուրսի ուսանող էր, երբ սկսվեց պատերազմը և նրան էլ բանակ տարան: 1942 թ. վերավոր վիճակում նա գերի էր ընկել և անցել տառապանքի զարհուրելի ուղիներով: Հրաշքով ողջ էր մնացել, վերադարձել տուն, շարունակել ընդհատված ուսումը և արդեն ասպիրանտ էր:

Ստալինյան վարչակարգի համար նախկին ռադմագերիները համարվում էին հայրենիքի դավաճաններ և նրանց նկատմամբ կիրառվում էին ամենադաժան պատիժներ: 1947 թ. հոկտեմբերի 18-ին Գևորգը ձերբակալվում է և առանց դատավարության դատապարտվում 10 տարվա ազատազրկման:

1955 թ. մարտի 19-ին, ժամկետից շուտ, նա ազատվում է կալանքից և արդարացվում:

Ութը երկար տարիներ Գ. Արգարյանը եղավ Գորկի քաղաքի մոտ գտնվող մի կալանավայրում, որի անունն էր "Сухобезводное" (այսինքն՝ «չոր և ջրազուրկ վայր»): Քչերն էին կարողանում դիմանալ անկարագրելի բանտային տառապանքներին, բայց Գևորգը դիմացավ: Այստեղ մենք պարտավոր ենք հիշելու մեկ այլ անձնավորության, առանց որի անձնվեր նվիրվածության ու բացառիկ հոգատարության Գևորգը հազիվ թե կարողանար դիմանալ ստալինյան ահավոր փորձություններին: Դա Գևորգի հարսնացու Ալինա Սեղբոսյանն էր, որը մեր ժամանակներում կրկնեց ռուս ղեկաբերիստների կանանց սխրագործությունը: Հաղթահարելով հազար ու մի դժվարություններ՝ Ալինան կարողացավ 12 անգամ այցելել Գևորգին: Նա միջերկրներ ու տաք շորեր էր հասցնում նրան, բայց ամենակարևորը՝ բարոյական ուժեղ նեցուկ հանգիստացավ Գևորգի համար:

Ասում են, որ նույնիսկ չեկիստները զարմանում էին այդ աղջկա համարձակության ու նվիրվածության վրա: Նա փաստորեն փրկեց Գևորգին և երբ ամուսնացան, երեք երեխաներ նվիրեց նրան: Բայց, ավաղ, կարճ տևեց նրանց երջանկությունը: Երեխաները դեռ փոքր էին, երբ ծանր ու կարճատև հիվանդությունից հետո Ալինան, որ Ֆրանսերենի դասախոս էր Երևանի համալսարանում, հրաժեշտ տվեց կյանքին: Գևորգին սպասվում էին նոր փորձություններ: Բայց նա կարողացավ մեծացնել, բարձրագույն կրթություն տալ և ամուսնացնել երեխաներին, մասամբ՝ իր նոր ընկերուհի էմմա Գասպարյանի օգնությամբ:

Կենսագրական բնույթի այս շեղումը անհրաժեշտ էր, որպեսզի ընթերցողն ավելի լավ ճանաչի վաստակաշատ գիտնականին ու ղեկավարի պատմության ու բանասիրության ասպարեզում նրա կատարած հետազոտությունների արժեքը:

Աբդարյանի բանասիրական ընդունակություններն առաջին անգամ դրսևորվեցին համալսարանական անտիպ դիպլոմային աշխատանքում, որը նվիրված էր՝ մերթ Մաղաքիա Աբեղային, մերթ Վարդան Արևելցուն վերադրված «Պատմութիւն վասն ազգին նետողաց» երկին: Աբդարյանը 1946 թ. հայտնաբերեց «Պատմության» իրական հեղինակին՝ Գրիգոր Ակնեբցուն, որի անվամբ էլ այժմ հրատարակվել են մոնոգրաֆիկ արշավանքներին վերաբերող և 13-րդ դարում գրված այդ երկի անգլերեն, թուրքերեն և վրացերեն թարգմանությունները: Հայագիտական գրականության մեջ երկար ժամանակ շրջանառության մեջ էր գտնվում «7-րդ դարում ապրած Զաքեոս պատմիչը»: Աբդարյանի ջանքերով այժմ վերացված է նաև այդ թյուրիմացությունը: Նա ապացուցեց, որ այդպիսի պատմիչ 7-րդ դարում գոյություն չի ունեցել:

Աստվածաշնչի «Սիրաքի գրքի» հայերեն թարգմանության մի քանի գլուխներ դեռևս 12-րդ դարում անհետ կորել են և փոխարինվել նշված գարում կատարված նոր թարգմանությամբ: Աբդարյանը 1966 թ. Մատենադարանի ձեռագրերից մեկում հայտնաբերեց և հրատարակեց 5-րդ դարում թարգմանված և դարեր շարունակ անհույս կորած համարված գլուխները: Այս նորությունը լայն արձագանք գտավ նաև Հայաստանի սահմաններից դուրս (Ի. Աբուլաձե, Մ. Ստոուն):

Գ. Աբդարյանի «Աբեղոսի պատմությունը և Անանունի առեղծվածը» մենագրությունը 1965 թ. արժանացավ հայագիտության մեջ աննախընթաց բարձր գնահատականի: Որպես թեկնածուական դիսերտացիա ներկայացված այդ աշխատության համար Գ. Աբդարյանին միանգամից շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Այդպես պատահեց ևս մեկ անգամ, երբ պաշտպանության էր գրված Պարույր Սևակի դիսերտացիան Սայաթ Նովայի մասին:

Պաշտպանության ժամանակ ելույթ ունեցավ ակադ. Կ. Մելիք-Օհանջանյանը, որն ասաց նաև հետևյալը. «Գ. Աբդարյանն օժտված է ապագա գիտնականի համար անհրաժեշտ նախադրյալներով՝ բանասիրական նորություն, սկզբնաղբյուրների կազմախոսական վերլուծության ընդունակությամբ, կուռ տրամաբանությամբ, փաստարկելու ակնառու կարողությամբ, համապատասխան մասնագիտական այլալեզու աղբյուրների նպա-

տակահարմար և խելացի օգտագործումով և գիտածն ու հայտնաբերածը գիտականորեն սահուն շարադրելու ձիրքով»:

Նման սլարագաներում երբեմն տուրք է տրվում չափազանցություններին ու գերազնահատմանը, ամեն ինչ դիտվում է վարդագույն ակնոցներով, բայց բոլորը գիտեին, թե գիտությունն ակադամը որքան խստապահանջ էր Կ. Մելիք-Օհանջանյանը, որը երբեք չէր խտացնում գույները և անպայման իրերը կոչում էր իրենց անունով: Նա մանրակրկիտ ուսումնասիրել էր Գ. Աբգարյանի բանասիրական հետազոտությունները և եկել այն եզրակացության, որ հեղինակի գիտական աշխատանքի մեջ կար «մի աբգարյանական յուրահատկություն»: Դա նրա գիտական-հասարակական խոհմեծությունն էր՝ հեռու հոխորտանքից և անձնագովությունից, ջանասիրությունը՝ կապված նպատակասլացության հետ, զարմանալի բարեխղճությունը:

Գ. Աբգարյանը գիտությունն ասպարեզ մտավ նոր խոսք ասելու, բանասիրական կնճռոտ խնդիրներ պարզելու, պատմական աղճատված իրականությունը վերականգնելու ազնիվ մղումով: Նրա առաջին քայլերը վերնասվածի վկայությունն են:

Հիշյալ մենագրությունը մեծ ներդրում է «Սեբեոսի պատմության» դարերի ընթացքում աղճատված բնագրի ուսումնասիրման և վերականգնման գործում: Միջազգային մատենագրության մեջ եզակի սույն սկզբնաղբյուրը, որը գրված է ժամանակակից հեղինակի ձեռքով և պարունակում է Կովկասի, Իրանի և Բյուզանդական կայսրության պատմությունը, բազմիցս հրատարակվել է հայագիտության դասականներ՝ Բ. Պատկանյանի, Հ. Հյուբշմանի, Ֆ. Մակլերի, Ստ. Մալխասյանցի և այլոց ջանքերով, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուներով: Թվարկված գիտնականների գործի արժանավոր շարունակողն է Աբգարյանը, որը՝ հենվելով ձեռագրական նոր նյութերի վրա, սրբագրել է նախորդ հրատարակություններում տեղ գտած գրչական վրիպակները, ինչպես նաև բնադիր լրացրել հեղինակային խոսքի այն միավորներով, որոնք «Սեբեոսի Պատմության» բուն ձեռագրերում չեն պահպանվել: Աբգարյանի բազմամյա հետազոտությունների պսակը հանգիստացավ 1979 թ. նրա հրատարակած «Պատմութիւն Սեբեոսի» բնագիրը՝ արժեքավոր ծանոթագրություններով և հավելվածներով հանդերձ: Հավելվածներից մեկը՝ «Ի Պատմութենէ Հերակլայ» կոչվող բնագիրը, առաջին անգամ տպագրված լինելով, որպես համաշխարհային գրականության նմուշ, գրավեց արտասահմանյան գիտնականների ուշադրությունը և 1983 թ. ֆրանսիացի հայագետ Ժան Պիեռ Մահեի անգլերեն թարգմանությամբ հրատարակվեց Ամերիկայում:

Նրա գիտական կռահումներն ու համարձակ եզրահանգումները երբեմն պատճառ էին գառնում գիտական կրքոտ բանավեճերի, որոնք, ինչպես հայտնի է, միշտ էլ նպաստավոր են եղել պատմական ճշմարտության բացահայտման և, ընդհանրապես, գիտության զարգացման համար: Խոսքը վերաբերում է հատկապես Սեբեոսին վերագրված «Պատմության» հեղինակների հարցի շուրջ Գ. Աբգարյանի կատարած հետազոտություններին: Նա ձգտում էր, և դրա կարողությունն ուներ, գիտական գովարին խնդիրների մասին պարզ ու հասկանալի ձևով գրել պարբերական մամուլում

(«Հայրենիքի ձայն», «Գրական թերթ» , «Ավանգարդ» , «Խորհրդային Հայաստան» , «Գարուն» և այլն): Յուրօրինակ շարադրանքով, երբեմն էլ հումորի զգացումով, որով առատորեն օժտված էր հեղինակը, շարադրվում էին նրա հոգևածները, ակնարկներն ու հաղորդումները: Հայկական և խորհրդային միութենական հանրագիտարանների համար նրա գրած հոգևածների թիվն անցնում է երեք տասնյակից: Հայ-ասորական կապերին նվիրված նրա աշխատությունն այնքան հաջողված էր, որ որոշում կայացվեց այն հրատարակել նաև ռուսերեն, անգլերեն ու ասորերեն լեզուներով:

Մատենադարանը տարեկան ունենում էր 50-60 հազար այցելու: Չափազանց մեծ էր ուղեցույցի պակասը, որը գիտական ճշգրտությամբ, բայց հանրամատչելի եղանակով ներկայացնեի Մատենադարանի ձեռագիր գանձերը: Մատենադարանի տնօրինությունն այդ գործը հանձնարարեց Գ. Աբգարյանին: «Մատենադարան» վերնագրով նրա գիրքը, որը լավ ընդունելության արժանացավ ընթերցողների կողմից, լույս ընծայվեց հայերեն, ռուսերեն ու անգլերեն լեզուներով: Վարչապետը հատկապես լույս ընծայվեց նաև դրա լեհերեն թարգմանությունը:

Գիտական կարևորություն ունեն նաև Գ. Աբգարյանի կատարած թարգմանությունները: Նրան ենք պարտական գերմանացի նշանավոր հայագետ Յոզեֆ Մարկվարտի «Պարսկահայք նահանգ» գերմաներեն անտիպ բնագրի հայերեն թարգմանության համար: Գ. Աբգարյանը գերմաներենից հայերեն է թարգմանել նաև մի շարք այլ գիտական աշխատություններ (Յ. Մարկվարտ, Հանս Պոլ Վալտեր, Լինոս Բենակիս):

Որպես գրականագետ և բանասեր Գ. Աբգարյանն աչքի էր ընկնում գիտական հետաքրքրությունների լայն ընգրկմամբ և հայտնի էր համաշխարհային գրականության հուշարձանների բնագավառում իր ծավալած բազմակողմանի գործունեությամբ: Նա հեղինակ է հայկական, հունական, սլավոնական, հին ֆրանսիական, գերմանական գրականության բնագավառում բացահայտված կարևոր նորությունների:

Մ. թ. ա. 310-245 թթ. ապրած հույն բանաստեղծ Արատոս Սոլացու «Յոյցք» կոչվող պոեմի հիման վրա միջնադարյան Հունաստանում կազմվել են օգերևութաբանական այլևայլ ձեռնարկներ: Հայագիտության մեջ ընգունված էր այն կարծիքը, թե Անանիա Շիրակացուն վերագրվող «Յաղագս ամպոց և նշանաց» գործն Արատոսի պոեմի թարգմանությունն է: Աբգարյանը պոեմի հունարեն բնագրի և Շիրակացուն վերագրված երկի հանգամանալի բազմատողմամբ բացահայտել է էական տարբերություններ և ցույց տվել, որ հայ հեղինակի երկը ոչ թե պոեմի անմիջական թարգմանությունն է, այլ գրա օգտագործմամբ կազմված օգերևութաբանական թարգմանական մի ձեռնարկ: Մատենադարանի ձեռագրերում հայտնաբերելով մինչ այդ անհայտ մնացած հատվածներ՝ Աբգարյանն ապացուցել է, որ միջնադարյան Հայաստանում գոյություն է ունեցել ձեռնարկի թարգմանությունն ամբողջությամբ: Նրա ուսումնասիրությունների շնորհիվ հայ մշակույթի գանձարանում ավելանում է միայն հայերեն թարգմանությամբ պահպանված հունական երկերից ևս մեկը:

1978 թ. Աբգարյանը 14-րդ դարի գերմանացի ժամանակագիր Դետմարի «Լյուբեկի Քրոնիկոնում» բացահայտեց եվրոպայում «Հայտոն Հայ»

անվամբ հայտնի դարձած հայ գրող Հեթումի «Պարտեզ արևելյան պատմություն» (Պատմություն թաթարաց)» երկից հատվածներ, որոնց հիման վրա ցույց տվեց, որ Փրանսերեն լեզվով Եվրոպայում շարագրված այդ գիրքը 14-րդ դարում ունեցել է նաև այնպիսի հատվածներ, որոնք մեզ չեն հասել: Աբգարյանի սույն վաստակով ճշգրտվում են Փրանսիական գրականության պատմության մեջ մտած և միջնադարյան Եվրոպայում բազմաթիվ լեզուներով թարգմանված միջազգային գրականության հուշարձաններից այս մեկի վերաբերյալ տեղեկությունները: Աբգարյանի ուսումնասիրությունն արժանացել է միջնադարադետների (Ն. Վ. Վարբուհյան, Ա. Դ. Լյուբլինսկայա, Լ. Ի. Կիսելյովա) ուշադրությանը:

Միջնադարագիտությունն Աբգարյանին է պարտական նաև «Ռայխունի» թյուրիմացության վերացման համար: Հանրագիտարաններում և մասնագիտական գրականության մեջ առկա է «Ռայխուն» անունով մի գրող, որից իբր օգտվել է «Լյուբեկի քրոնիկոնի» գերմանացի հեղինակը: Աբգարյանը գոթական տառերով գրված համապատասխան ձեռագրերի հիման վրա պարզել է, որ գերմանացու ձեռքին 14-րդ դարում գտնված Հայտոն Հայի երկի ընթերցանության մեջ գոթական տառերի շփոթի հետևանքով «Հայտոնը» արտագրված է եղել «Ռայխուն» ձևով և այդպես էլ թափանցել է «Լյուբեկի քրոնիկոնի» և ապա՝ մասնագիտական գրականության ու հանրագիտարանների մեջ: Սույն փաստն Աբգարյանն ապացուցել է նաև Հայտոն Հայի երկի այն հատվածների միջոցով, որոնք գերմանական ժամանակագրության մեջ կրում են «Ռայխուն» անունը:

Աբգարյանը կարևոր ներգրծում ունի նաև պարականոն գրականության ուսումնասիրման գործում: 1980 թ. նա պարզեց, որ միջնադարյան Հայաստանում գոյություն է ունեցել «Հակոբի նախավետարան» կոչվող պարականոն երկի մի այնպիսի տարբերակ, որը նման չէ մյուս տարբերակներից (հունական, ասորական, եթովպական, ղպտական, սլավոնական, արաբական, լատինական) և ոչ մեկին: Աբգարյանի ենթագրությամբ՝ սույն տարբերակը հայերեն է թարգմանվել ասորական բնագրից, որը մեզ չի հասել: Միայն հայերեն թարգմանությամբ սլազպանված սույն տարբերակի հիման վրա հայ միջնադարյան մանրանկարչության ոլորտն է թափանցել նախամայր Եվային Քրիստոսի գայակի գերում պատկերող մի եզակի մանրանկար, որն Աբգարյանը բացահայտել է «Մուղնու ավետարան» կոչվող հայկական ձեռագրում (11-րդ դար): Աբգարյանի բացահայտած նորությունը մտել է գիտական շրջանառության մեջ և արժարժվում է մեզանում ու արտասահմանում հրատարակվող գրականագիտական և արվեստաբանական ուսումնասիրություններում:

Համաշխարհային գեղարվեստական գրականության որոշ երկեր վրացական գրականություն են թափանցել հայերեն թարգմանությունների միջոցով: Դրանցից է նաև հունարեն, եթովպերեն, լատիներեն և այլ տարբերակներով հայտնի «Բարուախոս (Ֆիզիոլոգ)» կոչվող առակների ժողովածուն: Ն. Յա. Մառը ժամանակին անառակելիորեն ապացուցել է, որ վրացական տարբերակը թարգմանված է հայերենից, որի վկաներն են վրացերենում առկա բացահայտ հայկաբանությունները: Սակայն հայերեն թարգմանության որոշ տարբերություններ գրգել են ենթագրելու, թե միջ-

նադարյան Վրաստանում գոյություն է ունեցել նաև հունական մի բնագիր, որից և բխում են վրացական տարբերակում հայերենից տարբերվող հատվածները: Գ. Աբգարյանը 1980 թ. Մատենադարանի ձեռագրերից մեկում հայտնաբերեց «Բարուախոսի» հենց այն տարբերակը, որը միջնադարում գտնվել է վրացի թարգմանչի ձեռքում և որով վերանում են վրացական «Բարուախոսում» կարծեցյալ հունական բնագրի մասնակցությունը մասին ենթադրության հիմքերը: Վրացական «Բարուախոսն» ամբողջապես թարգմանված է հայերենից, առանց հունարենի միջամտության:

Սլավոնագիտության մեջ իշխում է այն կարծիքը, թե հունաստանում գոյություն է ունեցել «Բորիսի և Գլբբի ասքի» հունարեն բնագիրը: Նման ենթադրության համար հիմք է հանդիսացել ժամանակին Ղրիմում գտնված հունարեն Հայսմավուրքի մի ձեռագիր, որի լուսանցքում հունարեն տառերով դրոշմված է եղել Ասքին վերաբերող մի մակագրություն: Վերջինիս մանրակրկիտ ուսումնասիրությամբ, ինչպես նաև հաշվի առնելով ռուս-հունական եկեղեցական դավանաբանական առնչությունների միջնադարյան վիճակը խնդրո առարկա ժամանակաշրջանում (13-րդ դար), Աբգարյանը պարզել է, որ մակագրությունն արտագրված է Ղրիմի եկեղեցիներից մեկում օգտագործված հայերեն Հայսմավուրքից: Ինչ վերաբերում է Ասքի հայ միջնադարյան թարգմանությանը, ապա այն կատարվել է "Успенский сборник" կոչվող ձեռագրում (12-13-րդ դար) պահպանված ռուսերեն բնագրից: Սույն փաստը բացահայտելու համար Աբգարյանը համեմատել է Ասքի սլավոնական (բելոռուսական, ուկրաինական, ռուսական և այլն) բոլոր հայտնի տարբերակները:

Կիրիլ և Մեֆոդի եղբայրների ձեռքով ստեղծված սլավոնական այբուբեններից մեկը՝ Գլագոլիցան շատ շուտ է դուրս եկել շարքից: Պահպանվել են այդ տառերով դրված հատուկենտ ձեռագրեր, որոնցից մեկն է այժմ Վատիկանի գրադարանում պահվող «Ասեմանու ավետարանը»: Հայագիտությանը մինչ այդ անհայտ մնացած սույն ձեռագրում Աբգարյանը հայտնաբերել է Մեծ Հայքի և Գրիգոր Լուսավորչի հիշատակությունները կրող մի էջ, որով բացահայտվում է հայ-ռուսական հարաբերությունների մասին վկայող հնագույն գրավոր աղբյուրը սլավոնական գրականության մեջ: Բանն այն է, որ «Ասեմանու ավետարանում» ընդօրինակված բնագիրը պատկանում է հենց սլավոնական այբուբենի ստեղծող Կիրիլի գրչին:

1986 թ. Աբգարյանը գերմանական հնատիպ գրքերում (Բեռնհարգ ֆոն Բրայգենբախի «Ուղեգրությունում») հայտնաբերեց հայոց առաջին տպագիր այբուբենը, որը լույս է տեսել Գուտենբերգի գործակիցների տպարանում, 1486 թ., Հակոբ Մեղապարտի հիմնած հայկական տպագրության թվականից 26 տարի առաջ:

Աբգարյանն առանձին հոգևածներ է նվիրել բազմաթիվ հին ու նոր գրողների և բանաստեղծների՝ Խորենացի, Նարեկացի, Լամբրոնացի, Թլկուրանցի, Կարապետ Վիպող, Խաչգուռզ, Աբովյան, Բաֆֆի, Խաչակյան, Վարուժան, Վերֆել, Խեչումյան և այլք: Նա աջակցել է «Սասունցի Դավթի» էստոներեն թարգմանությանը: Նրա գրչին է պատկանում նաև եվրոպական և ամերիկյան հայագետներին ու հայագիտության պատմությանը նվիրված հոգևածների շարք:

Աբխազական գիտնականների խնդրանքով Գ. Աբգարյանը կազմեց և գրաբարից ուսուցիչներին թարգմանեց «Հայկական աղբյուրները Աբխազիայի և արխազների մասին» ժողովածուն, որը պետք է լույս տեսներ Սուխում քաղաքում: Բայց վրաց-աբխազական հակամարտության պատճառով դա տեղի չունեցավ:

Գիտական կարևոր ծրագրեր ուներ Գ. Աբգարյանը: Նա ցանկանում էր կազմել և հրատարակել Փափստոս Բուզանդի «Հայոց պատմության» և Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» քննական բնագրերը: Բայց ծանր հիվանդությունը խանգարեց նրան: Նա մահացավ 1998 թ. մայիսի 15-ին:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ